Հավելված
Գյումրի համայնքի «Արարատ կրթահամալիր» ՀՈԱԿ-ի
տնօրենի 2026 թվականի մարտի 13-ի N015 հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արարատ կրթահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպության երաժշտության դաստիարակի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին**

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արարատ կրթահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպության երաժշտության դաստիարակի (1.դրույք)** | **1)Որակավորման պահանջները՝**<br>Հաստատության երաժշտության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն՝ երաժշտական կամ արվեստի դպրոց:<br>2) **Ընդհանրական պահանջները.**<br>Հաստատության երաժշտության դաստիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է՝<br>Տիրապետի երաժշտական գործիքի (դաշնամուր) կատարման տեխնիկական համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին:<br>Իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝<br>ա. ՀՀ Սահմանադրությունը, <<Կրթության մասին>>, << Հանրակրթության մասին>>, << Նախադպրոցական կրթության մասին>>, <<Լեզվի մասին>>, <<Երեխայի իրավունքների մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Լիցենզավորման մասին>>, <<Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը>>, <<Նախադպրոցական | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1)դիմում (Ձև 1).<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ.<br>4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5)ինքնակենսագրություն.<br>6)մեկ լուսանկար՝3x4 չափի.<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):<br><br>**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը>>, Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը։<br>բ. Մանկավարժության, հոգեբանության, նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական դաստիարակության և ուսուցման տեսության և մեթոդիկայի հիմունքները։<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության երաժշտության դաստիարակի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պայմանները։ | | **անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |

| **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
|---|---|---|
| Վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, Գյումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ<br>**օրը՝ 2026 թվականի** ապրիլի 15–ին, ժամը՝ 11:00 | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրի **համայնքի** «Արարատ կրթահամալիր» **համայնքային ոչ առևտրային** կազմակերպություն (**հեռ.093301434): Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում** (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի **հոկտեմբերի «22»-ի N 1981 - Ա/2 հրամանի):**<br>**Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:** | 2026 թվականի ապրիլի 9-ը ներառյալ: |